




ՏԵՐԵՆ-ԽՄԲԻՐ  
**Ե. ՓՈՐՈՍԵԱՆ**  
 ՆԱՄԻԿ ԿՈՒՐ ՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԿՈՒԹՅՈՒՆ  
 ՊԵՏԻ Ե ՈՐԴՆԵԼ ԱՌ  
 Խմբագր. ԱՐՇԱՆՈՅՍ ԼՐԱԳՐԻ  
 ԳԱՇԻՐԷ (Հասցեագրվել)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
 ԿԻՆՈՏՈՒ ՉԱՄԱՐ  
 Տարեկան, ուղղ զանկն. 60  
 Վեցամսեայ » 35  
 ՕՏԱՐ ԵՐԿՐԵՆԵ  
 Տարեկան Ֆրանկ 20  
 Վեցամսեայ » 12

Rédaction du journal arménien  
**ARCHALOUICE**  
 HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)

**ԼՐԱԳՐ**  
**ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ**

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԵՒԿ Է  
 ԵՒ ՔՂՈՒՍԱՐԻ ԵՄԵՔԸ  
 Խմբագրութեան վրայ :  
 Խմբագրութեան ուղղրած  
 գրութիւնք եւ չ'են տրուի :

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՔԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

**ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ**

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԱՐԴԻ ԿԵԱՆՔԷ

120 երեսներէ բաղկացած այս գրքոյ-  
 կը կը պարունակէ Պերճի (Մ. Տամատեան)  
 հայրենասիրական ոտանաւորները :

Գինն է 5 դրուս ուղ

Կը գտնուի խմբագրութեանս քով :

Սոյն գրքոյկէն գնելու փափաք ունե-  
 ցողներէն ոմանք կ'առարկեն մեզ թէ Ար-  
 շաղոյսի տպարանին հեռաւորութեան պատ-  
 ճառաւ դժուարութեան կը հանգիսին :

Իբրութեան համար յետ այսու մեր  
 ազգայինք կընան դիմել նաև Բարեգոր-  
 ծական Բնկերութեան Տնօրէն Մեծ. Լեւոն  
 էֆէնտի Միլիտանեանի և անկէ ստանալ :

Այս առիթու կարևոր է յայտարարել  
 թէ՛ սոյն հեղինակութեան մինչև ց'արդ-  
 խմբագրութեանս միջոցաւ սպառուածներն  
 գոհացուցիչ քանակի մը հասած չեն :

Արդէն ըսած ենք թէ պէտք է և կ'ար-  
 ժէ որ քաջալերուի Տարտրիկի հեղինակը :

**ԿԵՂՏՈՏ ԲԱՐՔԵՐ**

Ինչպէս նախորդ յօդուածիս մէջ հա-  
 մառօտակի պարզած էի, այդ դասակարգի  
 մենձ ազաները աւելի փառասիրութենէ  
 շարժեալ հանրային գործերու մէջ կը մրտ-  
 նեն, քան թէ ժողովրդին իրապէս օգտա-  
 կար հանդիսանալու անկեղծ առաջադրու-  
 թեամբ և համոզմամբ :

Ուստի սովոր են իրենց մանր մունր  
 գործերը խոշորացոյցի տակ ցոյց տալ և ի  
 ձայն փողոյ հուշակել ըրած բարիքնին և  
 շատ անգամ ալ՝ չըրածնին : Այսպէս՝ օրի-  
 նակի համար, ձեզ նկատմամբ քիչ մը բար-  
 եացակամ գտնուեցա՞ն, ձեզի համար մէկ  
 երկու անձի յանձնարարութիւն ըրի՞ն, ալ  
 լինցաւ. ձեր վրայ անկապտելի իրաւունք-  
 ներ ունենալ կը կարծեն : Իրենց փառասի-  
 րութեան հաշուետետրին մէջ պահանջին  
 կողմը խոշոր տառերով կը նշանակեն անու-  
 նըդ : Ալ պէտք է իրենց հըր հպատակ գոր-  
 ծիք ըլլաւ և, ի գէպ ու յանգէպս իրենց  
 գովեստներ միայն չապլես : Չտեսնե՞ր . . . ,  
 որոնք ա՛յդքան աժան գնել կը կարծեն  
 երախտագիտութիւնդ, և խորհելու, խօսե-  
 լու ազատութիւնդ կաշկանդած ըլլալու ցա-

ւակնութիւնը ունին : Սակայն յանցանքը բո-  
 լորովին իրենցը չէ, ո՛չ ալ մերը : այլ զմեզ  
 հալածող դժխեմ՝ ճակատագրին է որ հայ-  
 րենի օջախէն վտարանդի ըրաւ զմեզ այս-  
 պէս, որով շատերս խել մը աժեմ յաժեմ  
 ներուն բերան ծռելու հարկադրուեցան  
 պահ մը :

Պէտք է սակայն այդ նկատիս՝ յետ  
 ազաները լաւ համոզուին թէ մեզմէ ոչ ոք  
 իւր արժանապատուութիւնը ու խիղճը կը  
 ծախէ երբեք : Եւ աղէկ պէտք է գիտնան  
 թէ զիրենք քննադատողները canaille (ի-  
 րենց գործածած բառով) չեն բնաւ. ընդ-  
 հակառակը շատ պատուաւոր անձեր են և  
 իրենց չափ ու թերեւս աւելի պարկեշտ և  
 քաջամիտ :

Արդարև մենք բարոյական այնպիսի  
 բարձր դիրքի չը մէջ կը նկատուինք զմեզ,  
 որ իրենց նախատինքք, ո՛րքան ալ սաստիկ  
 ու գռեհիկ ըլլան, չեն կարող մինչև մեզի  
 համար, այլ ազտոտ բերաններէ արձակ-  
 ուած թուքն ու մուրը կը դառնայ կիյնայ  
 իրենց ճակտին վրայ . . . :

Մենք ճշմարտութեան և արդարու-  
 թեան սիրոյն համար՝ ամեն տեսակ զրկանք  
 և հալածանք կրելու պատրաստ ենք : Եւ  
 քանի որ մեզի պէսները կախուելու արժա-  
 նի կը դատեն և մինչև իսկ կախաղանի չուա-  
 նը իրենք քաշելու պատրաստականութիւն-  
 նին չեն քաշուիր յայտնելէ, մենք ալ անձ-  
 նազրհուրթեան պատրաստ ենք :

Ակներև ճշմարտութիւն է թէ հանրու-  
 թեան բարւոյն և օգտին համար զոհեր  
 պէտք են, ո՛չ ապաքէն զոհի համար ալ  
 դահիճ մը հարկաւոր է :

Եթէ իրենք նիւթական ուժերուն կը  
 վստահին, մենք ալ բաւական բարոյախան  
 կորով ունինք իրենց դէմ մաքառելու : Եթէ  
 նոյն իսկ մութի մէջ լարել ուզեն իրենց  
 անազնութեան մեքենաներն :

Արդ իրենց մեծամիտ յոխորտանքն ու  
 սպառնալիքը ծիծաղելի և արգահատանք-  
 նիս կը շարժեն, տեսնելով որ եղած քննա-  
 դատութիւն մը հերքելու անկարող՝ սոսա-  
 տիկ ցնցուած շղագրգռութենէ տենդաւար  
 կը զառանցին . . . :

ՀԱՅՅՈՒՆԻ

Հետեւեալ գրութիւնը, որ քանի մը  
 ստորագրութիւններ կը պարունակէ, կը հը-  
 րատարակենք. նկատի ունենալով միանգա-  
 մայն թէ՛ վերջերս Մարմինոյի Հոգաբար-  
 ձութիւնը որ գերեզմանատան այլ և այլ մա-  
 սերը բարեզարդելու և կոկիլու ձեռնար-  
 կած է, իւր ուշադրութիւնը կը դարձունէ  
 «անջատուած» կոչուած մասին համար ալ  
 տնօրինութիւն մը բնելու :

**ԱՆՁԱՏՈՂ ՊԱՏԵ**

Քաջալերուելով տեղւոյս հայ երիտասարդու-  
 թեան վերջերս ցոյց տուած «սթափման» գիտա-  
 կից ու եռանդուն շարժումներէն, պատեն տոխթ  
 համարեցինք հայ հասարակութեան ուշադրութիւ-  
 նը հրաւիրել ազգային և եկեղեցական վարչու-  
 թիկան այն խորութիւններուն վրայ, որք փո-  
 խանակ թեթեւցնելու հայ գրողականութեան և  
 այլ գրկեալներու արդէն վշտաբեկ սրտերուն վրայ  
 ծանրացող բեռն աւելի խափն իրադրծելու կը  
 միտին, այն գրկելոց վերջին հանգստարանին մէջ  
 գնելով որմա-վանդակապատ մը :

Շուրջ երեք տարի է, որ մեր գրկեալ ու կի-  
 սամուս եղբայրներն լուրեայն կը տուկան ազգ. իշ-  
 խանութեանց արհամարանաց ու խեղաթիւրեալ  
 բաւբասանաց սպասելով որ անուշաւ կարեկցու-  
 թեան կայծ մը վաղ կամ անաղան ծագելով ա-  
 նոնց սրտերուն մէջ՝ պիտի զգացնէ թէ սոյն թա-  
 փառական և արգահատելի տարրն ալ իրենց  
 պէս դիրք մը կամ հանգիստ կեանք մը ունեցած  
 էր երբեմն Մինչ այժմ իրենց արդար իրաւա-  
 ցը վրայ բռնացող ապերախներու ճիրաններէն  
 հրաշիւք իմն պրծելով դիմած են իրենց, յուսալով  
 որ չեն կրկնու այն, ինչ որ իրենց կորստեան ու  
 թափառական անստոյգ վիճակին առիթ է տուած . . . :

Պահ մը երբ յետագարձ ակնարկ մը նետել  
 ուզենք անցեալին վրայ, կարեւոր հարց մը կը ներ-  
 կայանայ մեզ ընելու, այն է,

Ի՞նչ վճռական միջոցներու գիմնց Գահիրէի  
 համայն հայութիւնն, մանաւանդ Ազգ. Վարչու-  
 թիւնն այդ եղկիլիներն սփոխելու համար, ինչ որ  
 Ազգ. Սրբազան պարտականութիւն մ'էր . . . : Նա  
 շատացաւ միմիայն մի քանի փշրանք նետելով  
 այդ սովալլուկ ամբոյի առաջ և որպէս զի ա-  
 լելին չպահանջուի, մի քանի անմիտներու դոյզն  
 ինչ անկարգութիւնները մասը փաթթելով քաշ-  
 ուեցաւ կծկեցաւ՝ մինչև նոյն ժամանակ չինայելով  
 ան պատուել կշտամբել առհասարակ բոլոր գաղ-  
 թականութիւնը :

Փափաք չունենալով շարք մը իրական փա-  
 տերով կամ օրինակներով ապացուցանել անժրե-  
 տելի ճշմարտութիւնը . . . մի միայն ի միջի այլոց  
 յատաճ կը բերեմք դուայի իրողութիւն մը, որոյ  
 պատճառաւ յուզուները չենք յուսաւ : Ի՞նչ մէկ ու  
 կէս տարուայ միջոցի մը մէջ իրենց յիշողութե-  
 նէն հեռացուցած ըլլան :

Պատուաւոր ընտանիքի մը ծոցէն ակամայ  
 բաժնուած անօգնական երիտասարդ մը, մոռցուած  
 ամենէն, գուրկ ինամոզներէ, կը փակէ իւր տա-

### ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

նապայից կեանքի շրջանը . . . Եկեղ. Վարչութիւնը դրամ կը պահանջէ զայն փոսը ձգելու համար . . . մինչեւ որ կը ներսուի եւ յետ որոյ կառավարութեան ստիպմամբ՝ փոխանակ վերջին խորհուրդներն ամբողջացնելու լուսանքներով կ'աներևու. . . թացնեն փարաւորներու երկրին աւազին տակ . . .

Ո՞ր է սակայն այդ զրկելոց վերջի ապաւէնն, բարեկեցիկ գասակարգին փառաւոր թագերէն անջատուած անշուք . . . տեղ մը:

Ազգակիր մայր մը, լալազին որբուայրի մը, անմխիթար եղբայր մը, վշտէն առաջնորդուած սրտաբեկ, մի անուռն հեռաւորութենէ, սարեր ու ձորեր եւ նոյն իսկ ծովերն ու ուղիներն ձեռքի ձեռք կը դիմէ դէպի իւր սիրելւոյն, վաղաթառամ կորուսելոյն դամբարանն, — եթէ ունի — բայց որքան անմխիթարելի եւ մեծ կըլլայ իւր կսկիծն երբ գերեզմանատան պահպանը զինք կ'առաջնորդէ անշուք, ցուրտ ու անխնամ հողակոյտի մը առաջ, նոյն իսկ ամուր պատով մը բաժնուած միւս թաղերէն . . . Միթէ սրբապղծութիւնն կը համարուի գաղթականաց կամ զրկելոց հողակոյտերն այլոց կից գտնուելը:

Զայնս տեսնողի առաջին տպաւորութիւնը կըլլայ այն անյագ ատելութիւնը եւ ստորնացումը՝ որ անժխտելի կերպիւ կը հաստատէ Եկեղ. վարչութեան գաղթականաց ու զրկելոց հանգչելի գործը դրամ խտրութիւնները: Այնպէս կը կարծենք թէ, գերեզմանատուններէ միմիայն կ'անջատուի այն մասը (եւ այն ալ ոչ թէ պատով) որ յատկացուած կ'ըլլայ անձնատպաններու կամ կրօնափոխներու . . . միթէ հայ գաղթականութիւնն ա՞յդպէս կ'ըմբռնէ Եկեղ. Վարչութիւնն:

Մի քանի անգամ մասնակի դիմումներ եղած են, թող տրուելու համար որ գէթ իւրաքանչիւրը իր անձնական ծախիւք ծաղիկներով ու թուփերով զարդարէ գաղթականաց փոսն՝ որպէս զի իւր ցուրտ ու անջատու տպաւորութենէն մերկանայ Սակայն միշտ ընդդիմութեանց ու խոչընդոտներու հանդիպած է խնդրանքներն նոյն իսկ գերեզմանատան Հոգաբարձութեան կողմէ. առարկուելով թէ «այն որ կարողութիւն ունի ծաղիկներու եւ կամ դամբարանի ծախս ընել, պարտի կանխաւ գնել հողն՝ որպէս զի իրաւատութիւն ունենայ զարդարել ըստ իւր հաճոյս»: Ահա խտրանաց եւ շահատակութեան գերագոյն նմոյշը, որու մէջ բացայայտ կ'երեւի այն արհամարհանքը, զոր արտաքուստ կը ջանան ծածկել, սակայն եւ այնպէս քննող աչքէ մը չվրիպիր անոնց անկարեկից արտերուն ձգտումները . . .

Երբ գաղթականաց կամ զրկելոց թաղն եւս զարդարուի ու խնամուի՝ այն ատեն ինչո՞ւ բարեկեցիկ գասակարգն պիտի նախընտրէ գնել հողն . . . զի յայնժամ դիտողն ի՞նչպէս կարող պիտի լինի գանձանիլ երկու տարերց գասակարգական տարբերութիւնը . . . մենք սովորական մահկանացուք՝ մինչ միւսները . . . խտրութիւնն նոյն իսկ անշուք գիականութեան միջեւ . . . ո՞չ մարդկային Ծառութիւն, զի գերեզմանատունն է դառն հաւասարութեան:

Գեռ վերջերս ծանօթ գաղթական մը, մէկ տարի առաջ իւր մի փոքրիկ զաւակը կորսնցնելէ զատ՝ կորոյս նահա իւր կիներ Անմխիթար ամուսինը փափազելով զաւակին գերեզմանին քով թաւ զել ամուսինն ալ հարկ եղած էր վերստին պիղղ որդւոյն հողակոյտը: Տարի մը առաջ թաղուած մանկիկը նոյնութեամբ կեցած էր առանց փութութեան փոքր նշան մը ցոյց տալու, որովհետեւ զանց առնուած եր ջրի գաղթականաց վարի թաղը այսպէս յաճախ չիտած ննջեցելոց գերեզմանները կը պիղղին նորեր հիւրընկալելու համար առ ի չգոյէ յարմարութեան կամ տեղի, սրբապղծութիւնն չէ՞ միթէ . . . Այո՛, զլացուած է ջուրն եւս, մի բան սր կարելի է դիւրաւ ձեռք բերել մասնաւորաց թաղի ջրի աղբիւրէն, մի քանի մէթր խողովակի եւ կամ լոկ հողին վրայ բացուած ջրի ձամբու մը միջոցաւ . բայց ոչ, այդ ջուրն իսկ չէ յատկացուած սովորական մահկանացուներու:

Արդ կը համոզինք այն եղրակացութեան թէ, գէթ գաղթականութիւնը պէտք է նիւթապէս հաւաքական ուժ մը գոյացնելով, դիմէ առ որ անկէ փրկելու համար իւր վերջին ապաւէնն նշաւակի եւ խտրութեան առարկայ ըլլալէ, որովհետեւ ինչպէս յայտնի է Գահիրէի մէջ մեռնիլը սուկի սուղ եւ կամ ստորին է քան ապրիլը:

Մտրագրութիւններ

Մեր երրորդ էջին մէջ հրատարակուած նամակէն կը հետեցնենք թէ կիւրակէ օրն Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած է անպատշաճ խառնաշփոթութիւններ, սրտնք Եկեղեցւոյ Ս. Խորհրդոց վեհութիւնը յաշտողութեան նուազեցնելու եւ անոր իսկական արժէքը իւր բարձրութենէն խոնարհեցնելու հանգամանքը ունենալէ զատ ուրիշ բանի չեն կարող ծառայել:

Յայտնապէս կը ցաւինք իրաց այս անխորժ կացութիւնը դիտելով, որուն գըլխաւոր պատճառը ժողովական եւ ժողովուրդդիրար լաւ կերպով հասկնալէն յառաջ կուգայ:

Ամեն պարագայի մէջ, մենք չենք հաւատար թէ մեր աղաներուն համար Պատրիարքի մը անունը եկեղեցւոյ մէջ յիշուիլը եւ չը յիշուիլը ո՛ր է է նշանակութիւն ունենայ, այլ կը կարծենք թէ այս խնդիրը պարզ յիշատակութեան մը խնդիրը լինելէ աւելի, մեր Պատ. ժողովական աղաներուն ինչպէս նաև փոխ-տեղապահին եւ այլոց պաշտօնի տեւականութեան խնդիրն է որ կը պաշտպանուի Պատրիարքը յիշուիլը եւ չիշուիլը քօղին տակ: Որովհետեւ մեր աղաները խիստ լաւ ըմբռնած են թէ երբ ժողովուրդը իւր յիշողի խնդիրը առաջ մղէ եւ յաջողի՝ այն ատեն պիտի յիշէ նաև վարժարանին ալ արդի շատ անխնամ՝ և անկերպարան վիճակը եւ պիտի պահանջէ ինքնընտրի Ատենապետին հրաժարականը: Այնուհետեւ նկատողութեան պիտի առնէ եկեղեցւոյ մէջ գործուած զեզժուներու քանակը, հուսկ ապա պիտի բարձրանայ Առաջնորդարանի սանդուխտներէն վեր եւ պիտի պահանջէ գործարարութիւնը Ազգային Սահմանադրութեան, որուն համակողմանի ընաւ չկան պաշտօնավարող աղաներուն մէջ եւ այդ իսկ է պատճառ, որ բացարձակապէս ուրանալ կ'ուզուի եզրիտաբնակ հայ ժողովուրդի մը գոյութիւնը Գահիրէի մէջ:

Գեռ հազիւ ծանուցինք Որբասիրաց Ընկերութեան մը կազմակերպութիւնը, ահաւասիկ քանի օրէ ի վեր կը լսենք թէ այդ ընկերութեան ընդհանուր դիւանին Ատենապետը իրեն հետ առնելով գործադիր ժողովոյ երկու անդամներ կը հրաժարի, թիրեւս բաժանորդ ըլլալէ իսկ:

Այսպիսի հրաժարում մը մեզի իրաւունք կուտայ մտածելու թէ, Ընդհ. ժողովոյ ատենապետը, որոյ ձեւականութիւնները եւ էնթրիկները սիրելը ծանօթ է մեզ անպատճառ անել կացութեան մը մատնուած է եւ կամ բոլորովին օրէնքներէ տեղեկութիւն չունի, սր Գործ. ժողովոյ կը մատուցանէ իր հրաժարականը, փոխանակ Ընդհ. ժողով գումարներու եւ անոնց առջև իր պատճառները բացատրելէ վերջ թողելու իր պաշտօնը: Մենք այսպիսիները դասալիք զինուորներ միայն կրնանք կոչել, որոնք հարուածը իրենց կուսակէն կ'ընդունին:

Իւր անցելով յայտնի է տեղւոյս Բրուսիական հիւանդանոցին մէջ անտէր ու ան-

տիրական անկողնոյ ծառայող երիտասարդի մը համար, միջոցաւ Տեարց Տ. Բ. Ա. Ս. Յակոբեանի եւ Ա. Նազչճեանի հանգանակութիւն մը բացուած եւ հետեւեալարդիւնքը գոյացած է, զոր կը հրատարակենք ի գիտութիւն նուիրատուաց:

Արտալոյսի Խմբ. կողմէ, մատակարար Ս. Ա. Գարբինեան 20 դրչ. ողջ. Տեարք Ս. Օտապաշեան 20, Գ. Թուսեան 20, Հաւալանեան 5, Լ. Ս. Միրիճեանեան 10, Ոմն 5, Բարեգ. Ընկ. Հայոց 60, Կ. Երզնկացեան 10, Յ. Մարտիրոսեան 20, Ա. Էվլեան 20, Շահէն 10, Ա. Պոյաճեան 10, Ե. Գաբրաշ 10, Ա. Մաղաբեան 10, Ն. Գաբրիէլեան 5, Կ. Խանարեան 5, Գիսակ 10, Ա. Հապէշեան 10, Եղբ. Շահրոզեան 10, Ա. Յովսէփեան 5, Գ. Ղաբրիպեան 5, Ս. Զորովեան 5, Յ. Քիրքճեան 10, Ոմն 10: Գումար 325 դրչ. ողջ:

Հանգանակութիւնը կը շարունակուի:

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բէնի պատերազմական ատենը մեծամասնութեամբ (երկուքի դէմ հինգ ձայնով) Տրէյֆիւսը 10 տարուան բանտարկութեան դատապարտած է: Տրէյֆիւս բողոքագրով մը վերաքննութեան բարձրագոյն ատենին դիմած է:

—Այսօրուան հասած հեռագրէ մը կը տեղեկանանք թէ Մ. Զօլա Օնօրի մէջ բուռն լեզուաւ յօդուած մը հրատարակելով կ'ըսէ թէ Գերմանիա Էսթէրհայի ձեռքով յանձնուած պաշտօնավորներ ունի ի ձեռին: Հանրապետական կառավարութիւնը պէտք է այդ մասին տեղեկութիւններ ուզէ, եթէ ոչ Պ. Լապօուի յայտնութիւններ պիտի ընէ նոյն: ՉՉին ի վէրսայլ տեղի ունենալիք Զօլաի դատին ժամանակ:

—Ամէն օր հասած իւրաքանչիւր հեռագիր Անգղիոյ եւ Թրանսիլաւի միջեւ անխուսափելի պատերազմի մը ստուգութիւնը կը չեղտէ: Բրիտանական կառավարութիւնը որոշած է վերջնագիր մը զրկել Թրանսիլաւի:

Դալով այս վերջնոյն՝ հեռագիրներէն բացայայտ կ'երեւի թէ ժողովոյ անդամները վերջին նիստի միջոցին սաստիկ զայրոյթ յայտնած ընդդէմ Չէմպրէնի, եւ խաղաղութեան պահպանումէն այլ եւս յոյսերն ին կտրած: Վասն զի միանգամ ընդմիշտ մերժած են Մեծն Բրիտանիոյ գերիշխանութիւնը ճանչնալ: Քրիկէր նախագահը նիստը փակել է յայտարարելով թէ միմիայն Ամենակարող Աստուծոյ վրայ դրած է այլ եւս իւր յոյսն ու վստահութիւնը:

—Նախորդ թուով գրած էինք փոքրիկ յոյն աղջկան վրայ ի գործ գրուած խժըժութիւնները: Այս մասին կատարուած հարցաքննութեանց արդիւնքը կը քաղենք Բրոկրէէն:

Ի Պապ-էլ-Լուք տան մը մէջ խոշտանգուած փոքրիկ աղջկան մասին քննութիւնը առաջ կը տարուին:

Տեղական դատարանը երէկ է այս առաւօտ շատ մը վկայներ մտիկ ըրաւ:

Հարցաքննութեան միջոցին կիւր ուրացի է իրեն վերագրուած արարքները յայտարարելով թէ ինք տանը առաջին դատիկներ ընակելուն՝ երրորդ յարկին մէջ

անցած դարձածէն բնաւ տեղեկութիւն չունի:

Այդ կնոջ սպասուհին եւս, որ փոքրիկ աղջկան մայրն է, ճերմակալուելով հարցաքննութեան ենթարկուած է: Սպասուհին տեղացի յոյն կին մ'է: Ինքը փոքրիկ աղջկան մայրն ըլլալը բացէ ի բաց յայտարարեր է եւ յայտ վաւերական թղթեր ցոյց տուեր է: Եւ աւելցուցեր է թէ աղջիկը ուղղութեան բերելու համար էր որ հետը այնպէս խիստ կերպով կը վարուէր եւ ոչ ուրիշ ու է նպատակաւ:

Հարցաքննութեան միջոցին սպասուհին խոստովաներ է թէ իւր ամուսնոյն մեռնելէն վերջը վատակած է այդ զաւակը ուրիշի մը հետ ունեցած յարաբերութենէն եւ որուն անունը չէ ուզած յայտնել: Եւ ըսած է թէ փոքրիկ աղջիկը երկար ատեն Մայրապետներուն քով խնամուած է իւր տիկնոջ ծախքովը:

Տքթ. Պորնարիօ ամէն օր Պուլաքի որբանոցը կ'երթայ փոքրիկ աղջկան վիճակը քննելու:

Աղջիկը վտանգէ զերծ կրնայ նկատուիլ: Թէ և շատ տկարացած է, բայց վիճակը մտատանջութիւն չպատճառուեր: Մարմինն նշանները կը կրէ դեռ չուանին, որով զինքը կապած են: Այրուցքի հետքեր ալ կ'երևին:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Անցեալ կիրակի եկեղեցւոյ մէջ պատարագի արարողութեան ատեն երբ յիշատակութեան կարգը եկաւ, ժողովուրդի ստուար մեծամասնութեան մը կողմէ «չպիտի յիշուի» թաղականքով եկեղեցին լեցուեցաւ:

Կ'երևի, թէ՛ պատարագի քահանան եւ թէ սպասուորդները նոյն պահուն պատարագի սուրբ եւ նուիրական խորհուրդներու սպաւորութեան ներքեւ խորապէս զգածեալ, չ'ուզեցին իւսնալ ժողովուրդի ձայնը, եւ յանդիմանալ նոյն իսկ աւելի ազդու շնչաբերով յիշել Օրմանեանի անունը: Կարծես այդքանը բաւական չէր ժողովուրդի ազգային արժանապատուութիւնը վիրաւորելու, յանկարծ «Տէր ողորմեալ» ատեն Տէր Եզնիկ քահանան, պարտաճանաչի զգացումներով տոգորուած հզօր շրջանայեցութեամբ մը ելաւ եկեղեցւոյ բնիկն այն աստիճան արտաուց զազախարներ յայտնելու, որ ժողովուրդի արգահատանք ազդելէ զատ նոյն իսկ գայթակղալից երեւոյթներու ալ պատճառ եղաւ: մինչեւ անգամ ներկայից մէջէն երիտասարդ մը բարձրաձայն զգացնել տուաւ Տէր Հօրը թէ՛ եկեղեցւոյ պատկառելի բնիկն թափած բացականչութիւններուն ու յորտրտանքներուն պատասխանը, զուրք կարող է աւնուլ: Սակայն զժողովուրդը, արարողութեանց աւարտուէն յետոյ, կարելի չեղաւ պահ մը Տէր Հայրը գտնել եւ իւր փրօն խօսքերուն պարտ ու պատշաճ պատասխանը տալ:

Առաջնորդական փոխ-տեղապահ Տէր Մամբէ քահանայ, իր քովն ունենալով Առաջնորդարանի դիւանապետի Տոն-Քիւնս օգնականը, բանկալը նստած, եկեղեցւոյ տաճարին գունէն դուրս ելլող ժողովուրդը կը հրահրէր, որպէս զի չ'իշուի պատարագի ստորագրեն, իրենց ներկայացուած թուղթի մը վրայ: Սոյն միջադէպը ի հարկէ ժողովրդին մեծ զարմանք պատճառեց, երբ տեսաւ թէ, բոլորովին զիրար տրամագծօրէն հակասող եղելութիւններ տեղի կ'ունենային: քանի որ, ամիս մը առաջ Օրմանեանի անունը չ'իշուելու համար պատարատուած հանրագրին մէջ արդէն ստորագրած էին Հեռեւաբար, ժողովուրդին մեծ մասը բացարձակ իրաւունք ունեցաւ կոտորելու թէ, երկրորդ անգամ հաւաքուելիք այդ ստորագրութիւնները, կամ տարբեր մասնաւոր նպատակի

համար եղած ըլլան, եւ կամ կարեւորութենէ բոլորովին դուրս . . .

Նոյն միջոցին Տէր Հայրը բանկալէն դուրս ելլելով հին կեցող երիտասարդի մը մօտեցաւ եւ յանդիմանական շնչաբերով հետեւեալ խօսքն ուղղեց. «Միթէ քեզի անցեալ չորեքշաբթի օր չ'ուսուուիրեցի՞ որ եկեղեցւոյ մէջ չի պոռաւ. գիտե՞ս, քեզ չ'ըթեալակալ աքսորել կուտամ եւ այլն»: Եւ անա Ֆայլախաննի Տէր պատան աշխարհ բաւական չնամարելով, ազգին իրաւունքները շահագործող զաւաճան Պատրիարքի մը դէմ բողոքող սոյն անձնուէր երիտասարդին քթին բերնին ապտակ մը իջեցուց: շատ բնական է թէ, երիտասարդը չ'պիտի կարողանար սոյն օրինակ յայտնի անիրաւութեան մը հանդէպ լուռ մնալ. եւ անա պողպատի ճանկերով բուռն կոխամարտ մ'է որ տեղի ունեցաւ կամապաշտ Տէր պատանի եւ հէք երիտասարդին միջեւ եկեղեցւոյ բակը խռուած ժողովուրդը կարծես քիչ կուգար, մաս մ'ալ եկեղեցւոյ շրջակայ խառնութիւններէն թափեցան, որով խառնակութեան եւ շփոթութեան տեսարան մը պարզուեցաւ:

Երիտասարդին հայրենակիցները, ինչպէս նաեւ ներկայից մեծամասնութիւնը սկսան անհուն ուկեղանի կոնակներուն պէս, անստգիւտ կրօնաւորին վրայ խուժել եւ բացաարութիւն պահանջել թէ, ի՞նչ իրաւամբ կ'ապտակէ երիտասարդը:

Շատ հաւանական էր թէ բաւական ծանր կոխ մը տեղի ունենար իթէ փոխ-տեղապահ Տէր պատան խոնհետութիւն չի համարէր փախուստի ճամբան բռնելով իւր հետքը կորսնցունել:

Անա ինչպէս կը տեսնէր, գայթակղալից դէպքեր իրարու կը յաջորդեն եւ Գահիրէի միջնորդը տակաւ առ տակաւ հեղձուձիչ ու մթին դառնալ կեփի ազատամիտ երիտասարդներու համար, որովհետեւ հոս ազտատ տարր մը կայ, որ զժողովուրդը գոյութիւն ունեցած է ի վաղուց անտի, եւ նպատակ ունի ողջամիտ դասակարգին շուրջը խօսարար դառնալով՝ միշտ հարուածել ու դատափետել:

Որքան զարմանալի կը թուի մեզ, երբ կը տեսնենք թէ Սահմանադրութեամբ օժտուած երկրի մը մէջ նոյն իսկ ժողովուրդը իր ազգային շահերը պաշտպանելու համար վերջին ծայր դժուարութեանց կը բաղիտի. եւ ասոր ալ աւագ պատճառները ուրիշ բան չեն, բայց եթէ ժողովրդին արգար իրաւունքներուն դէմ ներհակ ուղղութիւն ունեցող տղէտ կրօնաւորութիւն մը եւ շահատէր իշխանութիւն մը:

12 սեպտ. 1899 Գահիրէ

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

Պրանսերէն թերթէ մը կը քաղենք հետեւալ ուղղեգրական ծանօթութիւններն, զոր Եւրոպացի ուղեւոր մը տուած է:

Չինաստանի մէջ ծնողաց կողմանէ զաւակաց դէմ գործածուած հարստահարութիւնք շատ ու շատ վայրենական են:

Չինացիք նախապաշարմամբ մը կը հաւատան թէ բարիի հրեշտակ եւ չարի գեւկայ:

Երբ մանուկ մը անօթութեան կամայլ պատճառաւ մը լայ, չար գեւէ բռնուած համարուելով, իրը նախնական դարման կը կսմտուն մանուկը:

Երբ խեղճ մանուկը ցաւէն սաստկացնէ իւր լացը, չարաչար կը ծեծեն եւ եթէ ասով ալ չի լսէ, կարծելով թէ այլ ևս զեւրուն ճիրաններէն ազատելու յոյս չ'կայ, առջեկը բռնելով գետինը կը զարնեն եւ կը մահացնեն: Այս տեսակ զհերուն թիւր անհամար է:

Այս երկրի մէջ աղջիկ զաւակաց ծրնունդն մեծ ցաւ կը պատճառէ ծնողաց:

Իգական սեռէ ննչնցը յուղարկաւորութեան համար կրօնական արարողութիւնք չեն կատարուիր: Երեւոյք երկնային բարիք մը կը համարին իրենց աղջիկ զաւակաց կանխահաս մահն եւ մինչև իսկ զանոնք գերզգման տանելու չ'յօժարելով իրենց բնակարաններուն գուռնէն կը կախեն. այն ատեն կառավարութեան կողմանէ սահմանեալ մարդիկ գալով սայլերու մէջ կը գնեն կախուած դիակներն եւ կը տանին մեծ փոսերու մէջ կը նետեն:

Սայլերը երթալու ատեն, երբեմն փոքրիկ բազուկ մը, սրունք մը, մերթ ծուրուած բերնով, ճնշուած քիթով, դուրս ցըցուած աչքերով գէմք մը սայլէն դուրս կախուած կը տեսնուի եւ երբեմն սայլէն դիակ մը դուրս կ'իջնայ. գերեզմանապահը սոսկայի հայտնաբերումը կը վերցնէ ու սայլին մէջ կը նետէ գիակը եւ իւր ճամբան կը շարունակէ:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հեծելանիւրի վաճառականի մը կողմէ հետեւեալ ծանուցումը տեսնուած է Քրանսական թերթի մը մէջ:

«Մէկ սանթիմի վճարումով գեղեցիկ եւ լաւ հեծելանիւ մը պիտի տամ ինչպէս նաեւ շատ ազուր հեծելանիւ յատուկ ըզգետ մը, պայմանաւ որ մէկ սանթիմը կանխիկ վճարողը մինչև 15 օր՝ ամէն օր վճարած դրամին կրկնապատիկը տայ հետեւալ օրը, այսինքն առաջին օրը 1 սանթիմ, երկրորդ օրը 2 սանթիմ, երրորդ օրը 4 եւ այսպէս մինչև տասն եւ հինգերորդ աւուր վերջը»:

Ի՞նչ խեղացի վաճառական, որովհետեւ թէ հաշուէք պիտի տեսնէք թէ առաջին օրը մէկ սանթիմ վճարողը՝ մինչև տասն եւ հինգերորդ աւուր վերջը 327 Քրանք 70 սանթիմ վճարած պիտի ըլլայ առատաձեւուն վաճառականին:

ԹՈՔԱԽՏ

Ե.

ԳԱՐՄԱՆ. Յ. Քրեօզոպ, Էօյալիթիս, Պէնզօսոպ, Տուօզալ, Էլէնին եւ այլն: Ասոնց առաջին երկուքը կը գործածուին իբր հակահիւսակաւ եւ մեղմացուցիչ, իսկ վերջինները թոքախիւժախտի մանրէները սպաննելու համար:

Ասոնցմէ զատ կայ նաեւ Քոխի Թիւպեռիլիքը՝ որ մեծ աղմուկ հանց 1888ին՝ եւ բժշկական աշխարհի բոլոր ուշադրութիւնը իր վրայ հրակիրելով աշխարհիս ամեն կողմերէն գիտուն բժիշկներ իր շուրջ ի Պէնզին հաւաքուեցան իր գիւտին գործածութեան եղանակը մօտէն ուսումնասիրելու՝ իր բրած փորձերուն անձամբ ակադեմիան լինելով:

Ասկէց քանի մ'ամիս առաջ ի Պէնզին հաւաքուած թոքախիւժախտի դէմ բժշկական համաժողովին մէջ՝ Տր. Քրիկէր իւր բանաստեղծութիւնը վերջացուց հետեւեալ եզրակացութիւնով: «Քոխի Թիւպեռիլիքը՝ թէ հիւր եւ թէ նորը՝ Էյալիթիսի նիւթեր են սրունք ունին առանձնապատուկ ազդեցութիւն մը Այս տեսակետով հին թիւպեռիլիքը ունի թէ մարդոց եւ թէ անասնոց վրայ եւ զած արտաճանաչութեան լաւագոյն միջոցները: Սակայն պէտք է գիտնալ թէ թոքախիւժախտի մասին թիւպեռիլիքը կը ներգործէ երկրորդ աստիճանի վարակումներու վրայ: Թիւպեռիլիքը մերթ կ'ամօքէ թոքերուն խոցուածները եւ մերթ

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐՈՒ Գ. Է. ՄԷԼՎԱՃԵԱՆ Գ Ա Ն Ի Ր Է Մ Ո Ւ Ս Ք Ի Փ Ո Ղ Ո Ց

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՅԵՐՈՒ

ՍՕՆՕԿՐԱԾ

Գ.Ա.ՀԻՐԷ. - Մուսի փողոց, - Գ.Ա.ՀԻՐԷ. Ս. Ե. Ս. Սեհնալիի վանառասուն դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քծնօղի ընտիր տեսակէ բանախելներու մեծ միջերք:

ԴԻՄԵՏԷՒ ԶՈՆ Եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, ազամանդազարդ, ոսկի, արծաթ եւ ցիւրի:

Յրանսական եւ ամերիկեան ապրանք ամենաընտիր տեսակներէն զարգեղէններ, շքաւոր, օղեւ, մասանիներ եւ այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽՍՏ ԶԱՓԱԻՈՐ

11-50

ՏՕՐՓՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱՎՈՅԺ Ակսիմ, Շարէ Բուլարի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակումներ:

Կը դադարեցնէ վայրկեանապէս ակուայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած գեղերովն:

Կը բուժէ լինտերու եւ բերնի ամեն տեսակ Գրանդուլթիւններն:

Իր լեցուցած ակումներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

3-10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱՂԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ Տալիբի Սանիլիի ճիւղ գիմաց

Ամենաընտիր ապրանքներէ կը պատրաստէ խիստ կոկիկ, հաստատուն եւ ճաշակաւոր կոշիկներ, արանց, կանանց եւ տղայոց համար:

Գիները չափաւոր եւ ածան: Փորձ մը միայն կը բուէ:

6-24

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ի Գ.Ա.ՀԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ: Ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրախուսներ, Այցեխարտեր, Յանկեր, Գիրքեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոկսեր, Ընկերութեանց եւ վաճառականներու սպազարակաւ արեւն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտագնութեան եւ գններու չափաւորութեան մէջ:

Եզրիպտոսի ո ե է քաղաքէն կամ դիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն ինամօք եւ փութով կը կատարուին:

կ'արգիլէ նաեւ անոնց ծաւալումը: Կ'արժէ ուրեմն նմանողութեան անուր թիւ պէտք չի զործածուի թիւերը: Գալով ուրիշ հակաթոքանի ծախտային զանազան շիճուկներուն (serum) ցարդ ապացուցուած չէ անոնց անգիւղութիւնը:

Կատ իւր ճանկայն սրճիւրարայը (sulfhydryl) սպիւր բոլոր մանրէասպան զեղերէն՝ մանաւանդ քրէցգոգէն աւելի զերազանց է թէ իւր անվրէպ ազդեցութեամբը եւ թէ իւր անվնաս յատկութեամբը, որովհետեւ բացի իւր կազդուրիչ գործութենէն ունի նաեւ հակամեխակայն առաւելութիւն մը ցարդ մեզի ծանօթ բոլոր միւս զեղերուն վրայ:

Հիւանդութեան յառաջացեալ վիճակին մէջ երբ գիշերային քրտինքը կը սառականայ, կրնայ գործածուիլ հետեւեալ ֆորմուլաներէն մին, (չափահասից համար)

Table with 2 columns: Name and Amount. Codeine 0.50, Eau distillée 120.00, Sir. simple 20.00, Alcool 10.00 m.

Այս խառնուրդէն պէտք է անուր մէկ սուրճի դգալ, երեկոյեան ժամ 8ին կամ 10ին:

Table with 2 columns: Name and Amount. Tint. de Belladone, Liq. de Fowler 3.00, Eau d'Amandes Amères 20.00 m.

Այս հեղուկէն պէտք է անուր 15-20 կաթիլ՝ երեկոյեան ժամը 5ին կամ 6ին:

Table with 2 columns: Name and Amount. Tellurate de soude 0.15 à 20, Alcool à 90° 50.00 m.

Այս հեղանիւթէն կրնայ արուել մէկ սուրճի դգալ քիչ մը քաղձը ջրոյ մէջ երեկոյեան եւ առտու: ՏՐ. Ա. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Ի ԳԱՀԻՐԷ

ԵՐԵՎԱՆԻ ԲԱՅՆՈՒՄՍ

ՄԱՆՁԵՐՈՒ, ԱՂԶԱՆՑ ԵՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԻՉԻ

Մանչերու դկրոցը կը գտնուի Անգղիացուց վարժարանի շէնքին մէջ ի Պապ-էլ-Պալատ:

Աղջկանց եւ Մանկապարտիզի համար գատ տուն մը յատկացուած է, որ կը գտնուի ի Հօշ-էլ-Շարգապի, Տավուտիէ:

Փորձառու ուսուցիչներու միջոցաւ պիտի աւանդուին Հայերէն, Անգղիերէն, Յրանսերէն եւ Արաբերէն լեզուները:

Մասնաւոր հոգածութեամբ ուժ պիտի արուի Անգղիերէնի:

Մանկապարտիզի համար պատրաստ է մասնաբաժնի եւ փորձառու վարժուհի մը եւ մանկապարտիզի վերջին մէթոտներով ու գրութեամբ պիտի կրթէ մանուկները:

Վարժարաններու բացումը տեղի պիտի ունենայ առաջիկայ Սեպտեմբեր կին:

Մանրամասնութեանց համար դիմել, Տիար Հաճի Փիլիպպոս Եագուպեանի ի Մէնչիէ:

7-15

ԱՄԻԱԿԱՆ ՀԱՅԻ ՓՈՒՌ

Շարա Մուհամեճ Ալի, Վիքտորիա դեղարանի դեմ Մանասքըր փողոց քիւ 25

Մ. Թորոսեան, Կ. Բարուհակեան եւ Ընկ. կը յայտարարեն թէ, իրենց նոր բացած փողոցին մէջ կը պատրաստուի անխարդախ ալիւրէ ստիական թիւրի հաց եւ Լաւաւ:

Մարտողութիւնը անպայման կերպով դիւրացնող Ասիական այս պատրաստութիւնը չատ մը փափկաճաշակներու գոհունակութեան արժանացած է:

Անվիճելի կերպով միակը եւ անմրցելին:

ՃԱՆՈՒԿԵՑԻՔ ԵՒ ՏԵՍԷՒՔ

8-8